# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 926-Ա

### ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի առաջին մասի առաջին պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային նախարարության և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Կոստանյանի N ՎԿ/15.4/19512-2025 գրությունը և Արմեն Մելիքսեթյանի՝ 11.06.2025 թվականի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արմեն Մելիքսեթյանին 2025 թվականի հունիսի 12-ին Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի պաշտոնի անձնագրով նախատեսված կարգով նշանակել Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի պաշտոնում և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.Արմեն Մելիքսեթյանի հիմնական աշխատավարձի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի լավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքային միավորի պաշտոնային դրույքաչափին համապատասխան: Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և կատարված աշխատավարձը և կատարված աշխատանքի դիմաց լրացուցիչ աշխատավարձը(լրացուցիչ աշխատավարձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող հավելումները, հավելավճարները, լրավճարները և պարգևատրումներն են):

3. Աշխատաժամանակի ռեժիմի և ամենամյա արձակուրդի տեսակի և տևողության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի

Հանրապետության աշխատանքային գործող օրենսդրության, այլ իրավական ակտերի, աշխատակազմի կանոնադրության և Հայաստանի Հանրապետության Ալավերդի համայնքի ղեկավարի իրավական ակտերին համապատասխան:

4.Արմեն Մելիքսեթյանին՝ 2025 թվականի հունիսի 12-ին անցնել իր լիազորությունների իրականացմանը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ և համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետին վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ. հունիսի 12
ք. Ալավերդի